# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Նարեկի Արեն Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա /10 ժամ/, երաժշտություն /2 ժամ/, տեխնոլոգիա (աղջիկներ) /2 ժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձն հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։ Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի։

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 9-ին /ինֆորմատիկա առարկան՝ ժամը $14^{00}$-ին/, / տեխնոլոգիա առարկան՝ $15^{00}$-ին/, իսկ / երաժշտություն առարկան՝ $16^{00}$-ին/, Արարատի մարզի Նարեկի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Նարեկ, Միկոյան 16։

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-53-86-29 հեռախոսահամարով։